


և Բեսսարաբիոյ Կոնսիստորիային, պատուիրելով տեղեկութիւն տալ Սինօդիս կատարման մասին։ Թ. 222։

— Ապրիլի 2-ին Սինօդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի անցեալ Մարտի 19-ի № 532 կոնդակը, որով յայտնում է, որ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ Ամենառզորմածաբար պատուիրել է Մխիթար եպիսկոպոսին լինել Աստրախանի թեմի առաջնորդ, հրամայեց Տ. Մխիթար եպիսկոպոսի Աստրախանի թեմի առաջնորդութեան պաշտօնում Բարձրագոյն Հաստատութեան մասին յայտնել իրան Տ. Մխիթար եպիսկոպոսին և Աստրախանի Կոնսիստորիային Թ. 226։



ԿՐՈՆԱԿԱՆ-ԲԱՐՁՐՈՅՆ ԿՐՈՆԱԿԱՆ

ՑԱՐՈՒԹԵԱՆ ՀԱԽԱՏԸ

«Արդարեւ յարեաւ Տէր»

Դուկ. 24, 34.

Ինչով է լցւում յարութեան այս օրը մեր սիրտը՝ Մենք խօսում ենք մահուան վերայ տարած. կեանքի յաղթութեան մասին, որովհետեւ մենք Խաչեցեալի կեանքից ենք խօսում։ Զինւորները և ժողովուրդը, քահանայապետները և գիւղացիք հաւասարապէս նրան մահուան դատապարտեցին, նա մեռաւ։ Նրա կողից արիւն և ջուր հոսեց, հաւատարիմ բարեկամները նրան սառը և դըժգոյն գերեզմանի մէջ դրին։ Սակայն բոլոր դատավճիռները, բոլոր մեխերը և բոլոր խաչերը բաւական չեն նրան մահացնելու, ոչ մի քար և ոչ մի կնիք արգելք չի կարող լինիլ նրա կրկին գալստեանը, հրեշտակները պարտական են արթնանալու ժամանակ նրան հոկել, և Գողդոթայի արտասունքներին հետեւում է յաղթութեան ուրախութիւնը։

Եթէ առաջին քրիստոնեայք անպայման հաստատապէս հաւատացած Ախնէին Քրիստոսի Յարութեանը, նրանք այժմ կորած կլինէին։ Հաւատն առ Կենդանին նրանց ևս կենդանի է պահում։ Որովհետեւ ոչ մէկ բան նրանց մէջ խեղդել չէր կարող այն հաւատը, թէ Քրիստոս կենդանի է, ուստի և նրանք կարող եղան ամբողջ մի հեթանոսական աշխարհ գրդուեցնելու, մինչև որ նա իբրև մի փրաթութիւն խորտակուեց. ոչ միայն Քրիստոսի վարդապետութիւնը, այլ նրա ամբողջ յաղթութեամբ լի, գերեզմանը խորտակող էութիւնն էր, որ նրանց այնպիսի ոյժ էր տալիս, ինչպիսին ձկնորսներն ու արհեստաւորները աշխարհում երբէք չէին ունեցել։

Ի՞նչ է պակասում մեզ։ Մեզ պակասում է հաւատը ճշմարիտ կենդանի Յարութեան, որ քրիստոնեաների հոգու խորքն է թափանցում։ Քրիստոսի Յարութեան պատմութեան լոկ ծանուցմամբը ամեն բան չի վերջանում։ Այս ծանուցումը բոլոր ամբիոններից է հնչում և հազարաւորները լսում են, սակայն աշխարհի յաղթութեան մէջ չեն արիանում։ Այն՝ ինչ որ մի անգամ պատահել է, մեզ համար պէտք է կենդանանայ։ Հաւատոյ համար մեզ տանջուել է պէտք, և այն ժամանակ այդ տանջանքից յարութիւն կառնենք. Քրիստոնեայ լինել շատ ծանր է, և հաւանականօրէն հաւատարիմները միայն կարող են քրիստոնեայ լինել։ Բոլոր այն քրիստոնեաները, որոնց հաւատը իրանց փորձանքի և հալածանքի պատճառ է եղել, հաստատուն կերպով հաւատացել են նրան, որ մեռեալներից յարութիւն առաւ և իւր եղբայրներին մահուան և կապանքի մէջ ձեռք է մեկնում։ Որտեղ մարդկային օգնութիւնը պակասել է, այնտեղ մարդ իւր կեանքին է հաւատացել, այդպիսիների համար Ս. Յարութիւնը անդիր արած լոկ իմաստութիւն չէր, այլ կոռուից և յուսահատութիւնից ծագող մի ներքին առաւօտ յարութեան։

Յաճախ հոգու ենք քաշում, որ մեր օրերի քրիստոնէութիւնը խաչից, և դրանով Ս. Յարութիւնից հրաժարուի։ Նա կամենում է պաշտպանուած լինել ամեն մի-

փշի խայթոցից։ Մարդ Քրիստոսին հետեւելով երբ դուրս է դալիս ճանապարհից՝ դրանով կորցնումէ քրիստոնէութեան փոռաւ։ գէպքերն ու մխիթարութիւնը։ Մտածեցէք, եթէ մանք ունենայինք մի արդարեւ ճշմարիտ քրիստոնէութիւն, ինչպիսին Քրիստոս տուեց, աղքատների մի հաւատ, մի եղբայրական ընկերութիւն, աշխարհատեցութիւն, արդարագատութեան մի կատարեալ անձնուիրութիւն, այն ժամանակ քահանայապետները մեզ ևս կըդատէին և Աստուած մեզ ևս Ս. Յարութիւն կշնորհէր։ Աստուած իւր որդւոց գերեզմանում չի թողնիլ, և որոնք նրան սիրում են, նրանց համար բոլոր իրերը, նոյն իսկ խաչի մեխերը բարի նպատակի կծառայեն։ Որտեղ ուղիղ քրիստոնէութիւն կայ, այնտեղ ծագում է առաւտը, այնտեղ հոգսից ու տիսրութիւնից գուրս լոյս է ոկտում երեալ՝—Յարութիւնը։

Եկէք հաւատանք Քրիստոսի կենդանացուցիչ զօրութեանը։ Նա միևնոյն ժամանակ մեզ համար ճշմարտութիւն է, որովհետեւ Նա ինքն է մարդկանց և ճշմարտութեան համար կռուողների նախապատկերը, ինչպէս որ Աստուած մեզ ցանկանում է։ Նա միշտ իրեւ մեռած կյայտարարուի և նրան կը կնքեն իրեւ վախճանուածի։ սակայն միշտ էլ Նա հզօր է քան այն զինւորները, որոնք նրան հօկել կցանկանան։ Ո՞վ կարող էր 30 տարի առաջ մտածել, որ Քրիստոս այսօր այսպէս կենդանի կլինի։ Նրան դրին գիտութեան նոր քարերից պատրաստած գերեզմանի մէջ, սակայն քարերը կտոր կտոր եղան և Նա կրկին անդամ եկաւ։ Նա այսօր էլ մարդկանց մէջ մի զօրութիւն է, մի ճշմարիտ կենդանի ոյժ, և ով Նրան միայն հնախոյզի պարզ սառնութեամբ վնտրել կցանկանայ, Նրան կը կրկնենք մենք Յարութեան խօսքը։ «Ի՞նչու էք վնտրում կենդանին մեռեալների մէջ»։

Յ. Նառամանից թարգմ.

Արտակ վարդապետ.

